ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն հանուն երկխոսության. փոխըմբռնման ամրապնդում հակամարտության կողմերի միջև

Իրականացման ժամանակահատված: 17.07.2020 - 15.07.2025

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 3 894 700

Ընդհանուր բյուջե: € 3 894 700

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Konrad-Adenauer-Stiftung e.V. DE

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ:

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն հանուն երկխոսության. փոխըմբռնման ամրապնդում հակամարտության կողմերի միջև» նախաձեռնությունը ԵՄ-ն հանուն երկխոսության ավելի ընդարձակ ծրագրի առաջին բաղադրիչն է: Նախաձեռնության նպատակն է ստեղծել լարվածության թուլացման, երկխոսության խթանման և փոխըմբռնման ամրապնդման համար բարենպաստ միջավայր Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում առաջացած ջրբաժաններին զուգահեռ:
Նախաձեռնության շրջանակում ԵՄ-ին և Հարավային Կովկասի ու Մոլդովայի Հանրապետության գործընկերներ կառույցներին խորհրդատվական աջակցություն կտրամադրվի և կապահովվի ներդաշնակություն տարբեր միջոցառումների միջև և դրանց իրականացման ընթացքում:

Ակնկալվող արդյունքներ:

«ԵՄ-ն հանուն երկխոսության. փոխըմբռնման ամրապնդում հակամարտության կողմերի միջև» նախաձեռնության ակնկալվող հիմնական արդյունքներն են.
- Բազմամակարդակ երկխոսության հարթակներ, ներառյալ միջտարածաշրջանային հանդիպումներ և աշխատաժողովներ, որոնք նպաստում են միջանձնյա կապերի ձևավորմանը՝ ջրբաժաններից անդին:
- Կարողությունների զարգացման միջոցառումներ՝ որոնց նպատակն է ամրապնդել փոխգործակցությունը գործընկեր երկրների և ԵՄ անդամ երկրների միջև: Կարողությունների զարգացման գործընթացը հիմնվելու է կարիքների վրա և պլանավորվելու է ըստ անցկացված խորհրդակցությունների արդյունքների:
- ԵՄ քաղաքականության աջակցության և փոխգործակցության վերաբերյալ իրազեկվածություն և ըմբռնում, ինչը կնպաստի խաղաղության և երկխոսության օգուտների ճանաչմանը: